



TOPICAL DIALOGUES

«Ռեզիոն» հետազոտական կենտրոն

ՀՐԱՏԱՊ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հետազոտությունն անցկացվել է Միջազգային և
անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի (ՄԱՀՀԻ)
«Անվտանգության քաղաքականությունների քննարկումների
բարելավումը Հայաստանում»
ծրագրի շրջանակներում

Մենք ինտերնետում

www.regioncenter.info

www.publicdialogues.info

<https://www.facebook.com/RegionCenter?fref=ts>

Խաղաղության եւ պատերազմի դիսկուրսի 2016 թ. հետապրիլյան մետամորֆոզները հայկական եւ ադրբեջանական հանրային հարթակներում

Լաուրա Բաղդասարյան
«Ռեզիոն» հետազոտական կենտրոնի տնօրեն

2017 թ. հունվարի 31

2016 թ. ապրիլի քառօրյա պատերազմը նախորդ երկու տարիների ընթացքում հայ-ադրբեջանական ռազմուժերի միջեւ հաճախացած բախումներին տրամաբանական ավարտուն փուլի բնույթ հաղորդեց: Բախումներ, որոնք կամ իրենց տարածքային ընդգրկման առումով (երբ տեղի էին ունենում միանգամից երկու կամ նույնիսկ երեք ուղղություններում, ներառյալ Հայաստան-Ադրբեջան պետական սահմանը), կամ՝ իրենց բնույթով եւ որոշակի չգրված կանոնների խախտմամբ (օրինակ, երբ խոցվեց հայկական ռազմաուսումնական ուղղաթիռը հայկական զինուժերի գորավարժությունների ժամանակ, 2014թ նոյեմբեր), կամ՝ գործի դրված զինատեսակներով (նաեւ խոշոր տրամաչափի հրաձգային զենքեր, ծանր զրահատեխնիկա եւ այլն) աննախադեպ էին գրեթե ամեն նախորդ միջադեպի համեմատ:

Սա ըստ էության հրադադարի ռեժիմի դե ֆակտո հիմնովին չեղարկման մի գործընթաց էր, որը նախաձեռնեց Ադրբեջանը, եւ որի արդյունքում արդեն 2015 թ. վերջին ՀՀ մի քանի պաշտոնյաներ հայտարարեցին, թե մենք (Հայաստանը) այլեւս պատերազմական վիճակում ենք գտնվում:

Որ Հայաստանը պատերազմական վիճակում գտնվող երկիր է, մինչեւ 2014-2016 թթ. սահմանային բախումների սաստկացման փուլը հանրային հարթակներում հնչում էին հիմնականում արմատական խմբերի կողմից: Ապրիլից հետո հայաստանյան լայն հանրության մեջ վերադարձավ պատերազմի մեջ գտնվելու զգացողությունը, որն ի դեպ, Լեռնային Ղարաբաղի բնակչությանը երբեք չի էլ լքել, անգամ 1994 թ. մայիսից հետո եղած հարաբերականորեն հանդարտ ժամանակահատվածներում:

Ադրբեջանի բնակչությանն էլ երկրի պաշտոնական եւ հանրային այլ գործիչները մշտապես հիշեցումնում էին, որ նրանք պատերազմող երկրի քաղաքացիներ են: Ոչ թե այն պատճառով, որ սպասում են հակառակորդի կողմից պատերազմի սանձազերծմանը, որքան որ վաղ թե ուշ միայն պատերազմով է տեղի ունենալու տարածքների վերադարձը եւ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի

իրավասությունների վերականգնումը: Առավել արմատական տրամադրված շերտերում (հիմնականում կորուսյալ հայրենիքի, օկուպանտ ու վայրագ հայերի մասին պատմություններով դաստիարակված երիտասարդների շրջանում) կա համոզմունքը, որ ինչքան շուտ դա լինի, այնքան լավ: Ավելիին հասնելու եւ ավելի լայնածավալ գործողություններ տարածելու կոչերը հատկապես սկսեցին հնչել պատերազմի օրերին Բաքվի փողոցներում ընթացող ուսանողական երթերում :

«Պատերազմ եւ ռազմական գործողություն, կարգավորում եւ լուծում»՝ հետապրիլյան տարընթերցմամբ

Ապրիլի դեպքերը հայկական եւ ադրբեջանական հանրային մակարդակներում տարբեր սահմանումներ են ստացել:

Հայկական կողմում մի քանի տարբերակների (բախումներ, լայնածավալ գործողություններ) կարճատեւ շրջանառումից հետո վերջնականապես ամրագրվեց «ապրիլյան քառօրյա պատերազմ» ձեւակերպումը: « Պատերազմ, որը սանձազերծեց Ադրբեջանը, որոշ տարածքներ շահեց, բայց մեծ հաշվով չհասավ իր բուն նպատակին»: Սա ունի իր խորքային ներքին եւ արտաքին ուղերձը՝ ինչպես դա արվեց 90-ականների սկզբին:

Ադրբեջանական հանրային հարթակներում ապրիլի առաջին մի քանի օրը ավելի հաճախ հեռարձակվում էր «պատերազմը, որի մասին մենք այդքան խոսում էինք, եւ որի շնորհիվ կկարողանանք վերադարձնել մեր հողերը, վերջապես իրականանում է» պաթոսը: Հետո պաշտոնական աստիճանների կողմից սկսեց շրջանառվել «ապրիլյան գործողություն» ձեւակերպումը: Գործողություն, որը «ծավալեց Ադրբեջանն ի պատասխան հայկական սադրանքների, եւ որի արդյունքում վերադարձրեց իր տարածքների մի մասը: Եվ այդպես կլինի նաեւ հետագայում»¹: Խորքային ներքին եւ արտաքին ուղերձով՝ սա կամ դեռ այն, իսկական պատերազմի նախերգանքն է, կամ՝ ապագա նման գործողությունների շարքի սկիզբը, այնքան գործողությունների, որոնց

¹ 2017 թ հունվարին տեղեկացվեց, որ Ի.Ալիևը որոշում է կայացրել Ջեբրաիլի շրջանի Ջոջուղ Մարջանլի գյուղը վերականգնելու եւ այն առաջին պատերազմի տարիներին բռնի տեղահանվածներով բնակեցնելու մասին: Սա ներկայացվեց որպես ուղերձ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված միջազգային կազմակերպություններին եւ երկրներին, եւ գլխավորը՝ հայկական կողմին, «որը ժամանակավոր գրավել է մեր հողերը» (<http://www.trend.az/azerbaijan/politics/2714530.html>):

շնորհիվ մաս առ մաս Ադրբեջանը վերջնականապես կազատագրի իր հողերը հայ օկուպանտներից:

Ապրիլյան պատերազմն արմատապես փոխեց հայկական հասարակության վերաբերմունքը բանակցությունների առարկայի, հնարավոր ելքի եւ այլ ածանցյալ հարցերի նկատմամբ:

Բանակցությունների նկատմամբ վերաբերմունք –Ի տարբերություն Ադրբեջանի, որը պարբերաբար Հայաստանի հետ բանակցությունները (այսինքն՝ չպատերազմելը) ներկայացնում էր որպես իր կողմից իրականացվող զիջողականություն, հայկական կողմը միշտ է հայտարարել Ղարաբաղյան հակամարտությունը բացառապես քաղաքական բանակցությունների միջոցով կարգավորելու իր դիրքորոշման մասին: Նույնիսկ այն ժամանակ, երբ օրակարգում հրադադարի ռեժիմի խախտման միակ հարցն է եղել եւ այն Ռուսաստանի նախաձեռնությամբ ընթացել է Հայաստանի եւ Ադրբեջանի առաջին դեմքերի մակարդակով (2014 թ., օգոստոս): ԼՂՀ-ից հնչող կարծիքները բանակցությունների՝ որպես խնդրի կարգավորման մեխանիզմի, մասին ունեին մեկ տարբերություն, այն է որ Հայաստանի կողմից բանակցություններ վարելը ճիշտ ձեւաչափ չէ, Լեռնային Ղարաբաղը պետք է լինի բանակցային կողմ, իսկ Հայաստանը բանակցային գործընթացին պետք է մասնակցի որպես ԼՂՀ անվտանգության երաշխավոր:

Նախ՝ առաջին անգամ Ղարաբաղյան կարգավորման գործընթացի պատմության մեջ փոխվեց վերաբերմունքն առհասարակ Ադրբեջանի հետ որեւէ հարցով բանակցելու նկատմամբ: Ավելին, բանակցությունների վերսկսմանը համաձայնելու համար հայկական կողմն առաջ քաշեց նախապայմաններ, որոնք ուղղված էին թե Ադրբեջանին (վստահության միջոցառումներ, քանի որ ոչ հուսալի գործընկերոջ հետ Հայաստանը չի կարող նստել սեղանի շուրջ), թե՛ միջազգային հանրությանը (հասցեական գնահատականներ, երաշխիքներ):

Իսկ այն, որ այդ նախապայմաններն առաջ քաշելուց քիչ անց Հայաստանի իշխանությունները համաձայնեցին գնալ Վիեննայի (2016թ., մայիս) եւ Սանկտ Պետերբուրգի հանդիպումներին (2016թ., հունիս), բացատրվեց որպես ոչ թե առաջ

քաշված պայմանների չեղարկում, այլ՝ ընդառաջում ՄԽ միջնորդների, ապա նաև՝ Մոսկվայի՝ հանդիպման գնալու առաջարկությանը, հնարավոր է՝ խնդրանքին²:

ԼՂՀ ճանաչում – Ապրիլյան պատերազմն ակտիվացրեց Ղարաբաղյան հարցի լուծման թեման ներհայկական մակարդակում, պաշտոնապես եւ հրապարակային քննարկվեցին ԼՂՀ-ն ճանաչելու, իսկ հանրային շրջանակներում նաև՝ այն Հայաստանի կազմում հռչակելու տարբերակները: Դրանք մինչ այդ պարզապես համարվում էին հիմնականում ղարաբաղյան առաջին պատերազմի մասնակիցներից բաղկացած խմբերի, կամ առանձին քաղաքական ուժերի դիրքորոշումներ, եւ գնահատվում էին որպես պոպուլիստական, անխուսափելիորեն նոր պատերազմի հանգեցնող պահանջներ:

Կարգավորում եւ կոնֆլիկտի լուծում – Եթե այս եզրույթները մինչեւ ապրիլյան պատերազմը հայկական կողմում ընկալվում էին որպես համարժեք երեւույթներ, ապա ապրիլից սկսած դրանք լիցքավորվեցին տարբեր բովանդակություններով:

«Կարգավորումն» ըստ էության շարունակեց շրջանառվել որպես քաղաքական միջոց, բանակցությունների վերսկսում նախեւառաջ ռազմաճակատում կայուն իրավիճակի հաստատման նպատակով, իսկ «կոնֆլիկտի լուծում»-ն իր մեջ ներառեց նաև պատերազմի գաղափարը:

Այդպիսով 2016 թ. ապրիլից հետո «պատերազմի իրավունքը» դադարեց լինել բացառապես Ադրբեջանական դիսկուրսի մենաշնորհը:

Ադրբեջանում տարբեր ժամանակահատվածներում (կախված հասցեատիրոջից՝ ներքին լսարան եւ հակառակորդ, արտաքին լսարան) այդ իրավունքը տարբեր տարբեր դրդապատճառներով է ներկայացվել: Ներքին լսարանին պատերազմի անհրաժեշտությունը ավանդաբար բացատրվում է Ադրբեջանի տարածքները օկուպանտ զորքերից ազատագրելու, պատմական արդարությունը վերականգնելու հրամայականով, իսկ միջազգային հանրության համար հնչեցվում են տարածքային ամբողջականության վերականգնման, այս վերջերս՝ նաև հակաահաբեկչական լայնածավալ գործողության թեզերը:

² Մենք պիտի խնդրե՞նք, աղաչե՞նք, որ Ադրբեջանը բանակցի մեզ հետ. այդ բանակցություններն անիմաստ են. Քաղաքագետ, <http://armlur.am/528208/>, Բ՞նչ պայմանով կարելի է սկսել բանակցություններն Ադրբեջանի հետ, <http://lurer.com/?p=219693&l=am>

Հընթացս ռազմաճակատում իրավիճակի պարբերաբար սաստկացմանը հայկական կողմում (հանրային տարբեր խմբեր, ռազմական որոշ գործիչներ, բայց ոչ պետական շրջանակներ) սկսեցին արտահայտվել Ադրբեջանին պատերազմի միջոցով խաղաղություն պարտադրելու, ռազմաճակատում նրա կողմից նախաձեռնվող ռազմական գործողությունների շարքը այլևս կասեցնելու թեզը:

Հայերի՝ «ոչ պատերազմը», ադրբեջանցիների՝ «ոչ խաղաղությունը» եւ խաղաղարարները

Մինչեւ վերջերս պատերազմի եւ խաղաղության մասին Ադրբեջանի հանրության համար սահմանված դրույթները լիովին համապատասխանում էին այն պաշտոնական վերաբերմունքին, որը ցուցադրվում էր հայկական կողմի հետ հանրային հաղորդակցական հարաբերություններ ունեցող սեփական քաղաքացիական խմբերի նկատմամբ: Նրանք հիմնականում մարդիկ են, որոնք չէին տեղավորվում «նախքան ադրբեջանական պայմաններով դարաբաղյան հակամարտության լուծումը հայերի հետ ոչ մի կապ» բանաձեռի շրջանակներում:

Ճիշտ է այդ բանաձեռը, չնայած 2013 թ. կիրառված մի փորձի³, այդպես էլ օրենսդրական կամ գրավոր այլ փաստաթղթի տեսք չստացավ: Բայց 2013 -2016 թթ. ընթացքում Ադրբեջանի ՀԿ-ների մասին օրենքում կատարվեց 26 փոփոխություն, որոնց արդյունքում երկրում գործող հասարակական կազմակերպությունները, այդ թվում՝ հայ-ադրբեջանական համատեղ ծրագրեր իրականացնող ՀԿ-ները, դադարեցրին իրենց աշխատանքները: Բարդացել էր ՀԿ-ների գրանցման հարցը, օտար ֆինանսավորմամբ գործունեություն ծավալելու համար նրանք պետք է անցնեին մի քանի խոչընդոտների միջով: Ավելին, սկսած 2014 թ. իշխանությունները շեշտակի սահմանափակեցին երկրում գործող միջազգային կազմակերպությունների եւ հիմնադրամների ցանկը, իսկ նրանք, որ մնացել էին, նախքան տեղական ՀԿ-ների հետ փաստացի աշխատանքը

³ 2013 թ մայիսի 18-ին փորձ արվեց պաշտոնապես արգելել Ադրբեջանի քաղաքացիների շփումները հայ գործընկերների հետ: Հայտնի դարձավ Ադրբեջանի ՄՄ երկու պատգամավորների օրենսդրական նախաձեռնության մասին («Օրենք Ադրբեջանի օկուպացված տարածքների մասին»), որի համաձայն քրեական պատասխանատվության պետք է ենթարկվեին հայերի հետ որեւէ համագործակցության գնացող Ադրբեջանի քաղաքացիները: Բացառություն պետք է կազմեին միայն պաշտոնական դեմքերը, որոնք հայերի հետ հանդիպում են Ղարաբաղյան կարգավորման շրջանակներում: Ընդամենը երկու օր անց հայտարարությամբ հանդես եկավ ադրբեջանական խորհրդարանի մամուլի ծառայությունը, որը հերքեց այդ օրինագիծն ընդունելու մտադրությունը: Ի՛նչը ստիպեց ետ կանգնել այդ քայլից, միանշանակ պատասխանել հնարավոր չէ:

պետք է իշխանությունների հետ համաձայնեցնեն իրենց գործունեության ոլորտները: Հասկանալի է, որ մարդու իրավունքների ու ազատությունների, հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված, այսպես կոչված ժողովրդական դիվանագիտության ոլորտներին վերաբերող ծրագրերը պետության հավանությանն ըստ սահմանման չէին կարող արժանանալ:

Հայերի հետ որեւէ հաղորդակցման գնացող քաղաքական գործիչներ բնության մեջ չկային: Իշխանությունների ներկայացուցիչների դեպքում դա կնշանակեր դեմ գնալ նախագահի պաշտոնական գծին, իսկ ընդդիմադիրների դեպքում՝ պարզապես տանուլ տալ իշխանություններին ներքաղաքական պայքարում:

Օրինակ, վերջին նախագահական ընտրությունների ժամանակ (2013թ. հոկտեմբեր) Ժողովրդավարական ուժերի ազգային խորհրդի ղեկավար Ջամիլ Հասանլին, որը պետք է դառնար միավորված ընդդիմության կողմից Իլհամ Ալիևի դեմ դուրս եկող թեկնածուն, ասում էր, որ «Ժողովրդական դիվանագիտությունն ընդունելի է այն ժամանակ, երբ պատերազմող երկրները հասել են փոխընդունելի խաղաղ համաձայնագրի կնքմանը: Միայն դրանից հետո, թշնամական տրամադրությունները մարելու համար, պետք է գործի դնել ժողովրդական դիվանագիտությունը: Հիմա, ժողովրդական դիվանագիտության մեջ Ադրբեջանի ներքաշվելը նշանակում է համակերպվել տարածքների օկուպացման հետ»⁴: Սա իշխանական դիրքորոշման ճշգրիտ կրկնություն է:

Անուն առ անուն կարելի է թվարկել ադրբեջանական այն հանրային դեմքերին, որոնք քաղաքական կարիերայի անցնելիս (ասենք Միլի Մեջլիսի պատգամավոր դառնալու նպատակով), դադարեցնում էին իրենց մասնակցությունը հայ-ադրբեջանական բացառապես միջազգային կազմակերպությունների, տարբեր արեւմտյան երկրների կառավարությունների, հիմնադրամների միջնորդությամբ ու ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրերին: Ոչ Հայաստանի եւ ԼՂՀ, ոչ էլ Ադրբեջանի իշխանությունները երբեք մինչ այդ խաղաղարար համատեղ ծրագրեր չեն ֆինանսավորել: Չնայած, ի տարբերություն Ադրբեջանի,

⁴ ЭКСКЛЮЗИВНОЕ интервью с Джамилем Гасанлы, <http://minval.az/news/17080>

հայկական կողմում մարզինալ էին այն խմբերը, որոնցով դատապարտում էին ադրբեջանցիների հետ համագործակցությունն ու հաղորդակցական կապերը: Ընդհանուր առմամբ այդ շրջանի համագործակցությունը կարելի է բնութագրել այս կերպ՝ հայերը խնդիր ունեին Ադրբեջան տարբեր միջազգային միջոցառումների մեկնելու, ադրբեջանցիները՝ խնդիր կարող էին ունենալ այլ վայրերում հայերի հետ նման միջոցառումներից հետո Ադրբեջան վերադառնալուն պես: Հաճախ այդպես էլ լինում էր, երբ ադրբեջանական մամուլում տպագրվում էին հայերի հետ անգամ երրորդ երկրներում կոնֆերանսների ու այլ միջոցառումների մասնակցած հայրենակիցների ցուցակները՝ «ճանաչենք մեր դավաճաններին» ենթատեքստով:

Մինչ օրս ՀԿ-ների գործունեության օրենսդրական վերջին երկու-երեք տարիների սահմանափակումները մնում են ուժի մեջ, ու ադրբեջանական նախկին հասարակական կազմակերպությունների փոխարեն սկսեցին հայտնվել նորերը՝ պետության կողմից հատկացվող իրենց գրանտներով եւ իշխանություններին իրենց լոյալությամբ:

Ապրիլին Ադրբեջանն ունեցավ ոչ այնքան տարածքային կամ ռազմական, որքան ներքաղաքական, հոգեբանական շահույթ: Ի կատար ածվեց տասնյակ տարիներ իր հասարակության համար որպես խոստում, իսկ հայերի համար որպես սպառնալիք հնչեցվող գործողություն/պատերազմը: Դրանից հետո ռազմաճակատում լարվածությունը շարունակում է պահպանվել մինչ օրս: Բացի 2016 թ. հունիսից (0 մարտական կորուստ) ապրիլյան պատերազմից հետո անցած բոլոր ամիսների ընթացքում արձանագրվել են ամիսը 1-3 մարտական կորուստներ հայկական զորքերում: Դրանք բոլորը ադրբեջանական կողմից արձակված դիրքային կրակակոծության կամ ադրբեջանական դիվերսիոն ներխուժման փորձի հետեւանք են:

Անցած տարվա դեկտեմբերին Բաքվում տեղի ունեցավ «Էրիվան» վավերագրական ֆիլմի շնորհանդեսը, որն ըստ էության կոչված է համայն աշխարհին ապացուցելու, որ ՀՀ ներկայիս մայրաքաղաքն իրականում ադրբեջանական խանություն է եղել եւ շնորհիվ ադրբեջանական մեծահոգության անցել է հայերին: Շնորհանդեսի ժամանակ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի հանրային կապերի բաժնի ղեկավար Ալի Հասանովը հայտարարեց, որ բացի այս ֆիլմից պետք է նաեւ այլ կարգի քարոզչական միջոցներ կիրառել: Օրինակ՝ պետք է տպագրել եւ Ադրբեջան այցելած զբոսաշրջիկներին բաժանել բացիկներ, այլ տեսակի նյութեր հայերին անցած ադրբեջանական պատմական Էրիվանի մասին:⁵

⁵ В Баку состоялась презентация документального фильма "Эривань – сокрытая истина", CBC.AZ, 23.12.2016

2017 թ հունվարին Ի. Ալիևը մասնակցեց Նախիջեւանում նոր ռազմական գորանցի բացման արարողությանը, եւ ի տես բոլորին ցուցադրեց Թուրքիայից գնված T-300 Kasirga համազարկային կրակի ռեակտիվ համակարգը: Ադրբեջանական եւ հայկական մամուլն արձագանքեց Նախիջեւանից Երեւանին հասցվելիք համազարկային կրակի եւ ադրբեջանական խոշոր քաղաքներ ոչնչացնող պատասխան կրակի մասին նյութերով:

2017 թ. հունվարի երկրորդ կեսին ավանդական հեռակա բանավեճ ծավալվեց Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ: Երկուսն էլ զինվորական լսարանների առաջ հայտարարություններ արեցին: Առիթը ՌԴ ԱԳ նախարար Ս. Լավրովի մամուլի ասուլիսի ժամանակ արտահայտած միտքն էր, որ Ղարաբաղյան հակամարտությունն Ադրբեջանի ներքին գործը չի կարող համարվել այստեղից բխող բոլոր հետեւանքներով: Ս. Լավրովը պատասխանել էր ադրբեջանցի լրագրողի հարցին՝ արդյո՞ք Ռուսաստանը կմիջամտի Ադրբեջանի ներքին գործերին, եթե նա հակաաբեկչական գործողություն ծավալի Լեռնային Ղարաբաղում հաստատված հայ ահաբեկիչների դեմ:

Հայերը Բաքվում՝ խաղաղության ետեւից

Բաքվի խաղաղության պլատֆորմ կոչվող գործընթացի մասին հայտնի դարձավ անցած տարվա նոյեմբեր-դեկտեմբերին: Բայց մեծ սենսացիա, թե այսուհետ Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն չեն պատժելու, այլեւ իրենք են առաջ մղելու հայ-ադրբեջանական հանրային կապերը, ի սկզբանե տեղի չունեցավ: Եվ ոչ միայն այն պատճառով, որ բացառապես քարոզչական ենթատեքստով եւ հեռահար արտաքին քաղաքական նշանառության գործընթացը ծավալվում էր/է վերը նշված ռազմական եւ տեղեկատվական լարվածությանը զուգահեռ: Այլ հիմնականում զուգակցվող սկանդալների եւ հայերին հղված ուղերձների պատճառով:

2016թ. նոյեմբերի 8-ին ադրբեջանական ԶԼՄ-ները տեղեկացրեցին Բաքվում երեք հայերի (իրենց բնորոշմամբ՝ հայտնի իրավապաշտպանների) մասնակցությամբ տեղի ունեցած «Հայ-ադրբեջանական դարաբաղյան հակամարտություն, հիմնական խոչընդոտներ եւ հեռանկարներ. հայացք Հայաստանից եւ Ադրբեջանից» խորագրով կոնֆերանսի մասին: Մեկ ամիս անց նրանք եւ մի քանի ադրբեջանական գործիչներ, այդ

թվում՝ խորհրդարանի պետականաշինության եւ իրավական հարցերի հանձնաժողովի նախագահը, մինչ այդ այսպես կոչված ժողովանագիտական բնագավառում տասնյակ տարիներ աշխատած հայկական ՀԿ-ներին անձանոթ ադրբեջանական ՀԿ-ների ներկայացուցիչներ տարածեցին Բաքվի խաղաղության պլատֆորմ կազմակերպության ստեղծման մասին՝ հռչակելով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման իրենց եւ Ադրբեջանի իշխանությունների համար ընդունելի տարբերակը. պլատֆորմը պետք է նպաստի Ադրբեջանի տարածքների, այնուհետեւ այնտեղ ադրբեջանցի փախստականների անհապաղ վարեդարձին, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հաստատմանը բացառապես Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում:

Այն սկանդալները, որոնք կապված էին «խաղաղության ետեւից» Բաքու մեկնած հայերի հետ նախքան նրանց նոր պայմաններով եւ հրամայականներով ժողովրդական դիվանագիտության ճանապարհի վրա կանգնելը⁶, սկանդալները, որ զուգորդվում էին հրնթացս հայազգի քաղաքացիներին՝ պլատֆորմին միացնելու խնդրի լուծման ճանապարհին⁷ արդեն իսկ խամրեցրել էին Ադրբեջանի «նոր, խաղաղարական իմիջի» փայլը:

Այս գործընթացը զարգանում է մի քանի ուղղություններով: Նախ՝ հավաքագրվում է տարբեր հայազգի անհատների համաձայնությունը: Կարելուր չէ, թե նրանք բնակվում են Հայաստանում, թե այլ երկրներում, անգամ կարելուր չէ, թե նրանք իրականում ինչ կարծիք ունեն հռչակված դրույթների մասին: Կարելուրը մեծաթիվ հայկական ազգանունների առկայությունն է ցուցակում: Երկրորդ ուղղությունը տարբեր արտասահմանյան գործիչների ու մասնագետների՝ Բաքվի նախաձեռնությունը ողջունելու գործընթացի ապահովումն է, հետեւաբար՝ նաեւ հռչակված դրույթներին

⁶ Նրանցից մեկը դեռ 2015 թ սեպտեմբերին ընտանիքով Բաքու էր մեկնել եւ խնդրել էր քաղաքական ապաստան, երկրորդ անձնավորությունը հայտնվել էր Բաքվում դարձյալ տարօրինակ պայմաններում, առանց անձնագրի Հ.Ալիեւին բողոքելու Հայաստանում իր նկատմամբ կատարված անարդարություններից: Ներկայացել էր որպես լրագրող, որին իրականում հայաստանյան մեդիա ոլորտում ոչ ոք որպես այդպիսին նախկինում չի էլ ճանաչել: Երրորդ անձնավորությունը, որն ավելի հայտնի է հայաստանյան հանրությանը իր էպատաժային գործողություններով եւ հայտարարություններով, եւ 90-ական թվականներից բնակվում է Շվեդիայում եւ այդ երկրի քաղաքացի է, դրանից մեկ ամիս առաջ, հոկտեմբերին փորձել էր մուտք գործել Ադրբեջան Եվրոպայից: Նրան մեկ օր Բաքվի օդանավակայանի անվտանգության գոտում պահելուց հետո դուրս հրավիրեցին երկրից, այդպես էլ չտալով մուտքի թույլտվություն: Թեեւ, ինչպես ինքն էր հայտարարել, նա մեկնել էր Բաքու խոնարհվելու Խոջալուի գոհերի հուշարձանի առջեւ:

⁷ Սկսած անցած տարվա դեկտեմբերից ադրբեջանական մամուլը, հատկապես haqqin.az կայքը, որտեղ աշխատանքի էին անցել Պլատֆորմի երեք հիմնադիր հայերից երկուսը, պարբերաբար հայտարարում են տարբեր երկրներում ներկայումս բնակվող հայերի իրենց շարքերն անցնելու պատրաստակամության մասին: Որպես կանոն այդ անձինք հետո հերքում են տեղեկատվությունը:

անմիջականորեն կամ միջնորդավորված կողմ հանդես գալու ցուցադրումը: Ի դեպ, այս ուղղությունում էլ եղան մի քանի հերքումներ, ինչպես էր նաև տարբեր երկրներում բնակվող հայերի դեպքում:

Ի՞նչի հետ են կապվում այդ հերքումները: Սովորաբար Բաքվից տրվում է «Ինչպե՞ս եք վերաբերվում հայերի եւ ադրբեջանցիների հասարակական հողորդակցությանը, եւ, օրինակ, հայերի ժամանմանը Բաքու» հարցը: Բնական է, որ հայ-ադրբեջանական հանրային մակարդակում շփումների իսպառ բացակայության պայմաններում, ինչն ի դեպ տարբերում է Ղարաբաղյան համակարտությունը հետխորհրդային տարածքների հակամարտություններից, հարցին տրվում է դրական պատասխան: Բայց ադրբեջանական մամուլում ներկայացվում է որպես հենց այդ կոնկրետ պլատֆորմի կոնկրետ դրույթներով սատարման փաստ: Այսպես եղավ, օրինակ, հայկական եւ ադրբեջանական մասնագիտական շրջանակներին քաջ հայտնի բրիտանացի լրագրող Թոմաս դե Վաալի դեպքում⁸: Իսկ դրանից հետո ինձ հետ հարցազրույցում նա ասաց. «Ես ողջունում եմ ժողովրդական դիվանագիտությունն ընդհանրապես եւ կարծում եմ, որ նման շփումների սղությունը թուլացնում է ղարաբաղյան խաղաղ գործընթացը: Առանց ադրբեջանցի եւ հայ քաղաքացիների ակտիվ մասնակցության, առանց հասարակությունների, այլ ոչ թե քաղաքական գործիչների մակարդակով երկխոսությունների, բանակցային գործընթացը վեր է ածվում դեկավարների էլիտար մի գործի, որոնք հետո վստահ չեն կարողանում լինել, որ իրենց դիրքորոշումը ստանում է հասարակության արձագանքը: Այդ պատճառով, երբ Ծննդյան տոների արձակուրդների ժամանակ ինձ զանգահարեցին Բաքվից եւ հարցրեցին, թե ինչպե՞ս եմ վերաբերվում մի քանի հայերի Բաքու ժամանելու եւ այնտեղ ղարաբաղյան հարցը քննարկելու փաստին, ես, իհարկե, պատասխանեցի, որ դրական եմ վերաբերվում: Բայց՝ ասացի ընդհանուր առմամբ, առանց մանրամասների մեջ խորանալու:

Իսկ հիմա, Բաքվի պլատֆորմի տեքստին եւ Բաքվում այն ստորագրած հայերի մասին տեղեկատվությանը ծանոթանալուց հետո կարող եմ միայն ավստասանքով ասել, որ դա ոչ մի տեղ չտանող ճանապարհ է: Հարցումների արդյունքներով հայերի 1% -ից էլ քիչ մասն է ընդունում այն գաղափարը, որը փաստորեն առաջ է քաշվում Բաքվի պլատֆորմում, եւ որը նշանակում է վերադարձ 1988թ. դիրքերին, այն իրավիճակին, որի պատճառով էլ սկսվեց հակամարտությունը»⁹

⁸ Томас де Ваал поддержал приезд армян в Баку, Haqqin.az, 29.12.2016

⁹ Բրիտանացի լրագրող Թոմաս դե Վաալ. Բաքվի պլատֆորմով առաջարկում են վերադառնալ 1988թ. ելման դիրքեր, Hetq.am, 12.01.2017

Նույնը տեղի ունեցավ նաև Ադրբեջանում ԵՄ գրասենյակի ղեկավար Մալենա Մարդի հետ, որը սկզբում ըստ ադրբեջանական մամուլի ողջունել էր Բաքվի պլատֆորմը¹⁰, իսկ հետո հանդես էր եկել հայտարարությամբ, որ ինքը կարելու է համարում բարդ թեմաների առիթով տարբեր խմբերի երկխոսությանը սատարումը, բայց քանի որ տեղեկատվությունը ստանում է մամուլից, չի կարող մեկնաբանել կամ գնահատական տալ Բաքվի պլատֆորմի աշխատանքին¹¹:

Բաքվի «կտրուկ խաղաղարար քարոզչական շրջադարձի» մյուս առանձնահատկությունն այն է, որ այն ընթանում է ադրբեջանական (գլխավորապես իշխանական թեի) մամուլի ակտիվ տեղեկատվական ուղեկցությամբ:

Վարագույրը բացեց եւ անհրաժեշտ շեշտադրումների ուղեկցությամբ տվեց Ադրբեջանի նախագահի վարչախմբի ղեկավար Ռամիզ Մեհթիեւն իր ծավալուն (27 էջ) հոդվածով¹²: Այստեղ նա նշում է, թե որքան կարելու են չկարգավորված հակամարտության պարագայում ժողովուրդների ներկայացուցիչների միջեւ հանրային քննարկումները: Բայց նաև զգուշացնում Հայաստանի նախագահին, որ եթե նա չանսա իր հասարակության ներկայացուցիչների ցանկություններին (այն է՝ ադրբեջանցիների հետ նրանց պայմաններով խաղաղություն կնքելուն), ապա շատ վատ կլինի հայերի եւ Հայաստանի համար: Նաև՝, որ ադրբեջանական ժողովուրդն այնքան բարի է, որ ժամանակին հայերին է զիջել Էրիվանի խանությունը: Նշենք, որ այս հոդվածը նույն օրը արտատպեցին մի շարք ադրբեջանական իշխանամետ լրատվամիջոցներ¹³

¹⁰ Глава офиса ЕС в Азербайджане выразила отношение аресту армянского члена Бакинской миротворческой платформы, Trend.az, 15.12.2016

¹¹ Глава миссии ЕС опровергла приписываемые ей слова, Contact.az, 19.12.2016

¹² Որպես կանոն հենց այս գործի ծավալուն ծրագրային հոդվածներով են նախանշվում քարոզչական բնույթի այս կամ այն թեքումները: Օրինակ՝ երկու տարի առաջ, Ադրբեջանում մարդու իրավունքների ծավալուն ոտնահարումների, քաղաքացիական հասարակության առավել հայտնի ներկայացուցիչների նկատմամբ բռնարարքների համար իշխանությունների նկատմամբ ԱՄՆ տարբեր աստիճաններից հինգ քննադատության, հրապարակային եւ ետնաբեմային ճնշումների փուլում Ռ. Մեհթիեւը հանդես եկավ ադրբեջանա-ամերիկյան հարաբերությունների վատթարացման փուլը նախանշող դարձյալ ծավալուն հոդվածով (<http://www.1news.az/chronicle/20141203110515850.html>), որի դրույթները նույնպես այնուհետև շրջանառվում էին տարբեր ԶԼՄ-ների արտադրած այդ թեմայով նյութերում:

¹³ Рамиз Мехтиев. Армяно-азербайджанский Нагорно-Карабахский конфликт в контексте гражданского общества Армении, 1news.az, 30.11.2016, կամ՝ Армяно-азербайджанский нагорно-карабахский конфликт в контексте гражданского общества Армении, Day.az, 30.11.2016, նաև՝ «Уповая на душевность армян, на то, что они будут благодарны, Азербайджан в мае 1918 года уступил им город Иреван», Azeri.today, 30.11.2016, նաև՝ Армяно-азербайджанский, нагорно-карабахский конфликт в контексте гражданского общества Армении Рамиз Мехтиев, руководитель Администрации Президента Азербайджана, академик Национальной Академии наук и т.д., Azertag.az, 30.11.2016

Ներկայումս պլատֆորմն ակտիվ քարոզողների թվում հանդես են գալիս իշխանական այլ գործիչներ էլ, որոնք մինչ այդ նույն էնտուզիազմով անում էին բոլորովին հակառակ պնդումներ: Օրինակները շատ են, թվարկումն անիմաստ, քանի որ սրանք զանգվածային երեւոյթներ են:

Բաքվի պլատֆորմի քարոզի տեղեկատվական ապահովմանը լծված ԶԼՄ-ների շարքում առաջին ջութակի դերը ստանձնել է haqqin.az կայքը:

Ժամանակին հենց այս կայքն էր գլխավորում 90-ականների սկզբին Մումգայիթում եւ Բաքվում հայերի ջարդերի թեմայով վեպի հեղինակ Աքրամ Այլիսլիի դեմ քարոզչական հարձակումները, հիմնավորում նրա դեմ ծավալված բռնաճնշումների, հոգեբանական շանտաժի դրոպապատճառները: Հայտնի իրավապաշտպան եւ մեր կենտրոնի հետ համատեղ ծրագրեր իրականացնող Լեյլա Յունուսի եւ նրա ամուսնու, բախումնաբան եւ պատմաբան Արիֆ Յունուսի դեմ բռնարարքների փուլում (2014-2015 թթ.) հենց haqqin.az-ն էր հանդես գալիս խմբագրական մեղադրականներով՝ «բացահայտելով» նրանց դավաճանական քայլերը: Օրինակ, որպես ֆոտոփաստ, կայքը հրապարակել էր Արիֆ Յունուսի ծնողների ամուսնության վկայականի ֆոտոպատճենը, որն ապացուցում էր, որ նրա մայրը ազգությամբ հայուհի է, իսկ հայրը թեւեւ ադրբեջանցի է, բայց հանգամանքների բերումով մեծացել էր դաստիարակվել էր Ադրբեջանում բնակվող հայ ընտանիքում¹⁴: Կայքի տրամաբանությամբ այս հանգամանքը պետք է հիմնավոր բացատրություն դառնար ադրբեջանական հասարակության համար, թե ինչու են ամուսինների դեմ առանձնահատուկ դաժանություն ցուցաբերել իշխանությունները:

Ի՞նչ ուղերձներ են հղվում հակառակորդ հայերին: Նախ, որ Ադրբեջանը համաձայնել է այդ քայլին՝ անսալով ապրիլյան պատերազմից վախեցած հայկական հասարակության ներկայացուցիչների խնդրանքներին¹⁵: Եվ երկրորդ՝ որ դրանով Ադրբեջանն էլի մեկ, բայց վերջին հնարավորությունն է տալիս Հայաստանին կործանարար պատերազմից խուսափելու համար¹⁶:

¹⁴ Секретное досье Лейлы и Арифа Юнусовых (фотофакты) Часть первая, Haqqin.az, 07.05.2014

¹⁵ Азай Гулиев: «Мы станем свидетелями еще большей поддержки «Платформы для мира между Арменией и Азербайджаном», Ara.az, 16.12.2016

¹⁶ Бакинская миротворческая платформа - последний шанс для Армении, Day.az, 22.12.2016

-
-
- 2016 թ. ապրիլյան պատերազմը որոշակիորեն փոխեց հայաստանյան հասարակության վերաբերմունքը Ղարաբաղյան հակամարտության առիթով տասնյակ տարիներ շրջանառվող մի շարք կայուն ձեռակերպումների, գործընթացների նկատմամբ: Կասկածի տակ դրվեց բանակցությունների նպատակահարմարությունը, խնդրի լուծում հասկացությունը այլևս ենթադրում է նաև Ադրբեջանին խաղաղության պարտադրանքի քայլը՝ պատերազմը:
 - Ի տարբերություն Լեռնային Ղարաբաղի բնակչության, որը հարվածների առաջին թիրախն է եղել միշտ, եւ որը առիթ էլ չի ունեցել մոռանալու պատերազմի վերսկսման վտանգի մասին, հայաստանյան հասարակությունը վերադարձավ այդ ընկալմանը հենց ապրիլյան պատերազմից հետո: Ադրբեջանում պատերազմի մասին խոսակցությունները մշտապես շրջանառվել են հանրային հարթակներում ոչ թե այն պատճառով, որ սպասել են հակառակորդի կողմից պատերազմի սանձազերծմանը, ինչպես հայկական կողմում է եղել, այլ որովհետեւ դա եղել է մնում է պաշտոնական քարոզչության առանցքային դրույթներից մեկը:
 - Ապրիլյան պատերազմից հետո տեղի ունեցավ հայկական հասարակության ռադիկալացում: «Պատերազմի իրավունքը» դադարեց լինել բացառապես ադրբեջանական դիսկուրսի մենաշնորհը, քանի որ ապրիլը ոչ թե չորս օր տեւած ռազմական ամբողջական գործողություն էր, որը եղավ եւ ավարտվեց, այլ իրավիճակ էր, որից հետո լարվածությունը ստաբիլ շարունակեց պահպանվել: Ընդ որում՝ ինչպես ռազմաճակատում ամեն ամիս տեղի ունեցող բախումների, այնպես էլ դրանց տեղեկատվական սպասարկման տեսքով:
 - Այս պայմաններում վատ կազմակերպված քարոզչական գործողության տպավորություն է թողնում Բաքվի «խաղաղարար փոխակերպումը», որը չունեցավ կազմակերպիչների համար ենթադրելի սենսացիոն ազդեցությունը: Եվ եթե կա մի հասարակություն, որը իրապես զարմացած է այդ ամենից, ապա դա սեփական ադրբեջանական հասարակությունն է:
 - Բաքվի խաղաղության պլատֆորմ կոչված գործընթացը բացարձակ նման չէ հայ-ադրբեջանական ժողովրդական դիվանագիտություն կոչվող այն համագործակցությանը, որը տասնյակ տարիներ ծավալվում էր հրադադարի ավելի կայուն պայմանների համատեքստում: Եվ ահա հիմնական ու սկզբունքային տարբերությունները:

ա/ Բաքվի պլատֆորմը հանդես եկավ քաղաքական հայտարարությամբ՝ որպես հակամարտության աղբրեջանական պայմաններով կարգավորման մի մեխանիզմ: Հայ-աղբրեջանական հաղորդակցական եւ այլ ոլորտների համագործակցությունը հակառակը, այդքան տարիներ հաջողվել է իրագործել շնորհիվ այն բանի, որ կողմերը, այդ քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ, բայց կամ հայերի, կամ աղբրեջանցիների օգտին համատեղ քաղաքական հայտարարություններ երբեք չեն արել: Նրանց հայտարարությունները պարունակել են բացառապես խնդիրները խաղաղ ճանապարհով կարգավորելու դրույթները:

բ/ Բաքվի պլատֆորմը նախաձեռնել է ֆինանսավորում են Աղբրեջանի իշխանությունները, վստահաբար՝ նախագահի միանձնյա որոշմամբ: Քանի որ 2014-2016 թթ. աղբրեջանական ՀԿ-ների ջարդից հետո, ոչ ոք չէր հանդգնելու հայտարարել դրույթներ, որոնք նախկինի հայելանման հակադրությունն են: Նախկին ժողովրդական դիվանագիտական ծրագրերն իրականացվում էին բացառապես միջազգային կազմակերպությունների, արեւմտյան երկրների կառավարությունների ու հիմնադրամների օժանդակությամբ ու նախաձեռնությամբ:

գ/ Բաքվի պլատֆորմի հիմնադիր հայ անդամներից ոչ մեկը չի ներկայացնում Հայաստանի հասարակական սեկտորը, տարբեր հանգամանքների բերումով նրանք ՀՀ քաղաքացիներ չեն: Այն, որ կազմակերպիչների համար էական չէ, թե որ երկրներում են ապրում եւ որ երկրների քաղաքացիներ են պլատֆորմին անդամագրվելու համաձայնություն տված (հետեւաբար՝ աղբրեջանական պայմաններն անվերապահորեն ընդունող) հայերը, վկայում է, որ խնդիրը ոչ թե հայերի եւ աղբրեջանցիների միջեւ վստահության մթնոլորտի ստեղծումն է, այլ հակառակը, տպավորություն ստեղծելն է, թե հայկական հասարակության մի սովոր հատված ընդունում է աղբրեջանական պայմանները եւ պատրաստ է կապիտուլյացիայի:

դ/ Բաքվի պլատֆորմի աղբրեջանական տեղեկատվական ուղեկցությամբ փորձ է արվում խեղաթյուրել իրական պատկերը՝ կապված աղբրեջանցիների հետ տասնյակ տարիներ համագործակցող հայկական կազմակերպությունների նկատմամբ թե հանրային, թե պաշտոնական վերաբերմունքի հետ: Ներկայացվում է, իբրեւ թե հայաստանցիների ու դարաբաղցիների բացասական, կամ երգիծական վերաբերմունքը այս գործընթացի նկատմամբ բխում է ոչ թե վերը նշված մի շարք հանգամանքներից, այլ իրենց իշխանությունների կողմից կիրառվող ճնշումներից: Այլ խոսքերով, տեղեկատվական հարթակներում փորձ է արվում «աղբրեջանականացնել» (այսինքն ծայրահեղ անհանդուրժող ներկայացնել) հայկական հասարակության

վերաբերմունքն իրենց այն ներկայացուցիչների նկատմամբ, որոնք թեկուզ ոչ հեռավոր
ապագայում կփորձեն նորից հաստատել վստահության մթնոլորտ հակամարտ
հասարակությունների միջև:

ե/ Բաքվի պլատֆորմը Հայաստանին եւ ԼՂՀ-ին ուղղված շանտաժ է, ապագա
պատերազմական գործողությունը արդարացնելու մի գործիք, քանի որ
Ադրբեջանն ամեն կերպ խափանում է ռազմաճակատում կայունության
պահպանման համար արվող առաջարկությունները:
